ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 1/023

ՀՀ-ԼՄՀ-ՄԿԿՀԶԲ-18/104

ք. Երևան «15» 02 2018թ.

«Պաշտոնական տեղեկագիր» ՓԲ ընկերությունը, այսուհետ՝ «Մատակարար», ի դեմս տնօրեն Ս. Գրիգորյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» այսուհետ՝ «Բաժանորդ», ի դեմս համայնքի ղեկավար Մ. Ղարաքեշիշյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

Մատակարարը պարտավորվում է Բաժանորդին որպես սեփականություն հանձնել՝

N	Ապրանքի անվանումը	Բաժանորդագրության քանակը	Մատակարարման ժամկետը
1.	«ՀՀ Պաշտոնական տեղեկագիր»	1 կոմպ.	2018թ.
2.	«ՀՀ Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր»	1 կոմպ.	2018թ.

իսկ Բաժանորդը պարտավորվում է վճարել դրա համար:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Մատակարարը պարտավոր է՝

2.1.1. Բաժանորդին հանձնել թիվ 1 կետում նշված ապրանքը՝ լույս տեսնելու պահից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

2.1.2. Ապրանքը բաժանորդին հասցնել հետևյալ հասցեով՝ հ. Ստեփանավան, Սոս Սարգսյանի փ/2/1:

2.1.3. Բաժանորդին հանձնել որակյալ ապրանք.

2.2. Բաժանորդն իրավունք ունի՝

եթե հանձնված է անպատշաճ որակի ապրանք՝ մեկ ամսվա ընթացքում պահանջել փոխարինելու այն որակյալ ապրանքով:

3. Գինը և վճարման կարգը

3.1 Պայմանագրի թիվ 1 կետում նշված ապրանքի բաժանորդագրության ընդհանուր գումարը, որը Բաժանորդը պետք է վճարի Մատակարարին, կազմում է 186000 (մեկ հարյուր ութսունվեց հազար) ՀՀ դրամ:

3.1.1 Գնի ցանկացած փոփոխություն թույլատրվում է միայն կողմերի համաձայնությամբ:

3.2 Բաժանորդը պայմանագրի 3.1. կետում նշված գումարը վճարում է Մատակարարին փոխանցումով՝ համաձայն ներկայացված հաշիվ-ֆակտուրայի:

3.3. Մատակարարը պարտավորվում է Բաժանորդին տրամադրել հրատարակված տեղեկագրերը վճարված գումարին համապատասխան՝ մեկ կոմպլեկտ «ՀՀ Պաշտոնական տեղեկագիր» 848 մամուլ, մեկ կոմպլեկտ «ՀՀ Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր» 340 մամուլ: Նշված մամուլը գերազանցելու, ինչպես նաև, արտահերթ համարներով (պրիմ) հրատարակվելու դեպքերում Բաժանորդը կարող է որոշել պայմանագրային գումարից դուրս մնացած տեղեկագրերի ձեռքբերման նպատակահարմարությունը:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1 Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.2 Կողմերը պայմանագրով սահմանված ժամկետների խախտման համար մյուս կողմին վճարում են տուգանք՝ տեղյակ պահելու օրվանից, յուրաքանչյուր օրվա համար բաժանորդագրության գումարի 0.01%-ի չափով:

5. Այլ պայմաններ

5.1. Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր՝ կողմերի ստորագրությամբ:

5.2. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

5.3. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՄԱՏԱԿԱՐԱՐ	ԲԱԺԱՆՈՐԴ
«Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ	«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ»
ք. Երևան, Տիգրան Մեծի 4,	հ. Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/2/1
Հ/հ 163008203131	Հ/Հ 900256101016
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02538276	ՀՎՀՀ՝ 06954104
հեռ. 52-01-28, 54-44-41	
Տնօրեն _____ Ս. Գրիգորյան	Համայնքի ղեկավար _____ Մ. Ղարաքեշիշյան